կտոր եւ նրա վրայ դրած էր հաց, պանիր, սոխ եւ աւելի ոչինչ: Տղերքը բոլորել էին այդ նահապետական սեղանի շուրջը, ամէն մէկը իր վերարկուն օթոցի փոխարէն իր տակը ձգած ունենալով: Խորովածը հրացանի սումբաներից, – որ շամփուրի տեղ էին գործածում, – տաք-տաք քաշում էին լաւաշների վրայ եւ այնպէս արիւնաթաթախ ուտում էին: Մի կողմում թաւալոած էր մի ահագին եղջերու, որից յօշոտում էին խորովածացու միսը: Նրա մօտ պառկած էր գինով լիքը տկճորը: Գաւաթի տեղ գործ էին ածում մի մեծ դդումի կտրած կէսը, որի ներսոյքը դուրս էին տոած: Նոյն գաւաթից ամէնքը խմում էին հերթով:

– Ինձ մօտ, Ֆարհատ, – ասաց Կարօն:

Ես նստեցի նրա մօտ: Այն օրուայ բոլոր անցքերը, սկսեալ հայր Թոդիկի բանտից մինչեւ խորհրդաւոր մինարեթը, իրանց ուրախ եւ տխուր տպաւորութիւններով մինչ այն աստիճան գրգռել էին իմ ջղերը, որ ես ամենեւին ախորժակ չունէի մի բան ուտելու, թէեւ ամբողջ օրը քաղցած էի մնացել: Տասն եւ երկու բոլորակ տարիներից յետոյ, սիրելի ընկերներիս հետ կրկին հանդիպելը թէեւ շատ ուրախալի է ինձ, – բայց այն օրից երբ նրանք անյայտացան, այնքան անհաւատալի զրոյցներ լսած էի նրանց մասին, որ բոլորովին չէի կարողանում ցրուել հին նախապաշարմունքը: Այդ մանկահասակ, ծպտեալ, կերպարանափոխ եղած փախստականները երեւում էին ինձ կասկածաւոր մարդիկ, մանաւանդ երբ նկատում էի, որ նրանք եւս ոչ բոլորովին հաւատարմութեամբ վերաբերւում էին դէպ ինձ: Ես տեսնում էի նրանց մէջ մի առանձին ծածկամտութիւն, խիստ զգուշաւոր խորհրդապահութիւն, որպէս թէ մի բանից քաշւում էին կամ վախենում էին: Ինչո՞ւ չէին կարող անկեղծ լինել ինձ հետ: Ինչ՞ն էր ստիպում նրանց, որ վերադառնալով հեռաւոր երկրներից, փոխանակ իրանց բարեկամների եւ ազգականների մօտ գնալու, նրանք ընտրել էին այդ անմարդաբնակ աւերակները: Չէ՞ որ քաղաքը շատ հեռու չէր այնտեղից, այն քաղաքը, ուր նրանք ծնուել էին, ուր մի քանիսի ծնողները դեռ կենդանի էին: Ինչո՞ւ չուրախացնել կարօտալի ծնողներին, մանաւանդ զատկական մեծ տօնի ժամանակ, երբ հայրը, մայրը, գրկելով նրանց, «Քրիստոս յարեաւ ի մեռելոցէ»-ի փոխարէն պիտի ասէին. – «մեր որդին կորած էր, գտնըվեցաւ. մեր որդին մեռած էր, կենդանացաւ»...

Իմ մտատանջութիւնը, իմ նոյն ժամուն տխրամած դէմքը չէր կարող աննշմարելի մնալ ընկերներիցս, մանաւանդ Սագօյի արծուի տեսութիւնից, որ դարձաւ դէպ ինձ այս խօսքերով.

– Կե՛ր, սիրտդ բաց արա՛, ի՞նչ ես ռեխդ թթռացրել ձմեռուայ երկնքի պէս: Չլինի՞ թէ մտածում ես, հիմա մայրս սպասում կը լինի ինձ, հիմա նա